

հաւաքւում է Աղմաղանից եկող ջրանցքի ջուրը, Գիւղում եղել է հայկական մի եկեղեցի, որ քանդել են և նրա տեղում մզկիթ կառուցել. սրա շուրջը և մանաւանդ հանդիպակաց բլրի վրայ կան բաւականաչափ գերեզմանաքարեր, սակայն առանց գրութեան. գիւղի եղրին կայ պահակատուն: Բնակիչները շիա թուրքեր են, երևան քաղաքից, որ 1828 թուին փախել են Կարսի շրջանի Սոսգորտ գիւղը և այդտեղից 1850 թուին դաղթել այստեղ: Ընդամենը 49 տուն են, 183 ար. 151 իգ. միասին՝ 334 հոգի: Պարապմունքը նոյնն է: Ունին 513 դ. 1440 ք. ս. վարելահող, 642 դ. 2300 ք. ս արօտատեղի:

Չորան-գետրուկմազ. ($62^{\circ} 27' 37''$ — $40^{\circ} 15' 37''$).—Մի փոքրիկ աննշան գիւղ է Կարա-կալայի հարաւային կողմը, մօտ երեք կիլոմետր հեռու:

Գիւղում կայ մի եկեղեցու հիմնապատեր. բռնում է 8 դ. 1400 ք. ս. տարածութիւն. բնակիչները շիա թուրքեր են Կարա-կալայից դաղթած 9 տուն. 45 ար. 43 իգ. միասին 88 հոգի: Պարապում են խաշնարածութեամբ և մասամբ երկրագործութեամբ. ունին 206 դ. 636 ք. ս. արօտատեղի և միայն 11 դ. 1000 ք. ս. վարելահող:

ԳԱՒԱՌԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ.

Նոր-Բայազէտի գաւառը կառքի ճանապարհով հաղորդակցում է Երևան քաղաքի, Աղէքսանդրապոլի գաւառի Դարաքիլիսայի երկաթուղու կայարանի և Շարուր-Դարալագեաղի գաւառի Բաշ-Նորաշէն գիւղի հետ: Դէպի Երևան և դէպի Դարաքիլիսա կան փոստային կառքեր և կայարաններ, թէև ճանապարհը ոչ ամբողջովին խճուղի է: Նոր-Բայազէտից Բաշ-Նորաշէն տանող ճանապարհը, որ մեծ մասամբ շինուած է նրա շրջակայքում գտնուած գիւղերի ձրիաքար տուած բանուորների ձեռքով, դեռ ևս չունի փոստային հաղորդակցութիւն: Գաւառի կենդրոնական քաղաք Նոր-Բայազէտը հեռու է Երևանից $116\frac{1}{4}$, Դարաքիլիսայից $130\frac{1}{2}$ և Բաշ-Նորաշէնից 130 վերստով: Գիւղերի միջև ձգւում են նեղ կածաններ, տեղ տեղ էլ սայլի հասարակ ճանապարհ: Բաղաբում և Դարաչիչագում կան ֆաթոններ և սահնակներ, ինչպէս նաև ֆուրգոններ:

Ելնողիկում, Ալէքսանդրովկում, Օրդակլում և Դարաչիչակի գիւղերում, Բասարգեչարում, Նադեժդինում կան ֆուրգոններ, իսկ սայլեր բոլոր գիւղերում՝ բացի Քեանքեանի գիւղական

հասարակութիւնից, Բեռնակրութեան համար գործ են ածուում նաև ձի, էջ, ջորի և, մասամբ, եգի:

Պետական պաշտօնեաների համար իւրաքանչիւր գիւղ պարտաւոր է ձի տալ՝ ստանալով իւրաքանչիւր վերստի համար 3 կոպէկ: Այս պարտադիր կողք թէև պիտի կատարուի ձիատէրերի կողմից հերթով, սակայն տանուտէրերի աչաւութեան պատճառով մեծ մասամբ ծանրանում է աղքատ և անաղղեցիկ ձիատէրերի վրայ: Շատ անգամ տանուտէրը կաշառքներ առնելով աղատում է հարուստ և աղղեցիկ ձիատէրերին այս կողից և ըռնութեամբ խեղճի և կամ իւր հակառակորդի ձին քաշում, տալիս պաշտօնեային: Այս պատճառով և՛ ճանապարհորդները ստիպուած են լինում բաւական երկար պասել, իզուր ժամանակ կորցնել, մանաւանդ որ ամէն մի գիւղ պարտաւոր է ձի տալ միայն մինչև իւր մերձակայ գիւղը և ճշ աւելի հեռուն: Մի քանի գիւղերում հասարակութիւնը այսպիսի անարդարութիւնների վերջ դնելու նպատակով, յանձնարարում է մի ձիապանի կամ կառապանի կատարելու այդ կողը, խոստանալով իւր կողմից ևս վճարելու նոյնչափ, որովհետև բացի այն որ պաշտօնեաները երբեմն բոլորովին չեն վճարում, նաև վճարը համապատասխան չէ չարչարանքին. այսպէս մի գիւղացի իւր մի ձիով 5-10 վերստ անցնելու համար նախ իւր դանդաղկոտութեամբ անցկացնում է դրիթէ մի ամողջ օր, որովհետև պահանջած միջոցին եթէ ձին հանդուժն է, պէտքէ դնայ բռնի բերի, եթէ տանն է, մի քիչ գարի պիտի տայ, յետոյ սրան նրան պիտի դիմի թամբ, սանձ գտնելու, ապա ինքը ոտով պիտի գնայ պաշտօնեայի հետևից, որպէսզի իւր ձին յետ բերի, այնտեղ էլ մի քիչ պէտք է սպասէ որ թէ ինքը և թէ ձին հանգստանան, և այս բոլորի համար նստ տանալու է պաշտօնեայից ընդամէնը 15-30 կոպէկ: Այս բոլորի վրայ պէտքէ աւելացնել, որ շատ անգամ ձին պահանջում են գործի, կալի, քաղի ժամանակ, երբ մշակը միայն օրական ստանում է 50.80 կոպէկ:

Բաղաբում կայ երկու հիւրանոց և մի քանի խան. կենտրոնական գիւղերումն էլ, ուր գտնւում է գիւղական դատարանը, սրա մի սենեակը կահաւորուած է և յատկացրուած ճանապարհորդ պաշտօնեաներին իբր իջևան:

Փոստ և հեռագրատուն ամբողջ գաւառի մէջ կայ միայն Նոր-Բայաղէտում և Ելենովկում, իսկ ամառները նաև Դարաշիչակում: Սոսկ փոստային բաժանմունք բացուած է միայն Ներքին Ախտայում: Ամբողջ Բասարգեչարի և Ղարանլուխի ոստիկանական շրջանները զուրկ են փոստից, պաշտօնական թղթերի համար

ոստիկանները պահակներ են ուղարկում Նոր-Բայազէտ: Մի պատուիրուած նամակ և կամ մի քանի բուլբի ստանալու համար գիւղացիները 40-50 վերստ են անցնում ու վերադառնում:

Փոստն էլ ամենայն օր չի գործում. շաբաթը երեք անգամ ստացւում է, երեք անգամ ուղարկւում դէպի Երևան և դէպի Ղարաքիլիսա: Դրամական գործողութիւնները կատարւում են շաբաթը միայն մի անգամ:

Հեռագիր խփւում է առաւօտուայ ժամը 8-ից մինչև երեկոյեան ժամը 9-և ոչ ամբողջ օրը: Արտասահման հեռագիրներ չեն խփւում, որովհետև պաշտօնեաները օտար լեզուներ չգիտեն:

առ